Յիշեալ երկու կաթողիկոսները, Մովսէս եւ Փիլիպոս, խիստ պայծառ տեղ են բռնում հայոց եկեղեցական պատմութեան մէջ, այն խառնաշփոթ, կորստաբեր եւ աղէտաւոր անցքերից յետոյ, որ կատարուեցան նրանց հինգ նախորդների միմեանց հետ ունեցած անընդհատ հակառակութիւններից: Առաքէլ կաթողիկոսը դեռ կենդանի էր, երբ Դաւիթը կաթողիկոս ձեռնադրուեցաւ, յետոյ Մելիքսեդեկը, յետոյ Սրապիոնը, յետոյ Մելիքսեդեկի եղբօրորդի Սահակը, եւ այդպէս, միաժամանակ Էջմիածնի հայրապետական աթոռը դարձել էր հինգ կաթողիկոսների հակառակութեան առարկայ: Կաշառքով փոփոխակի մինը միւսի ձեռքից խլում էր իշխանութիւնը, եւ Էջմիածինը ընկած էր ծանր պարտքերի ներքոյ, նրա բոլոր սրբութիւնները գրաւ էին դրուած մահմեդականների մօտ: Իսկ այդ ցաւալի ժամանակը փոքր չտեւեց. նա տեւեց ամբողջ քառասուներեք տարի: Դա այն ժամանակն էր, երբ Հայաստանը լողում էր արեան ծովի մէջ, երբ Շահ-Աբասը հայոց գերիները վարում էր դէպի Սպահան...

Հիմա դառնանք դէպի Լիմ եւ Կտուց անապատների հիմնարկութիւնը:

Սիւնեաց մեծ անապատի միաբաններիցն էր նաեւ Ներսէս վարդապետ մոկացին: 1622 թոին, այսինքն Շահ-աբասի գերութիւնից 16 տարի յետոյ, Ներսէսը եկաւ Վասպուրականի կողմերը եւ, մտնելով Լիմ կղզին, նորոգեց այնտեղի աւերակ ու ամայի վանքը եւ կազմեց անապատականների մի նոր միաբանութիւն, միեւնոյն կարգերով ու կանոններով, որպէս նա տեսել էր Սիւնեաց մեծ անապատում: Մի քանի տարոայ ընթացքում կրօնաւորների թիմը այնքան բազմացաւ, որ Լիմ կղզին նրանց համար շատ փոքր երեւցաւ, այդ պատճառով նրանց մի մասը տեղափոխուեց Կտուց կղզին եւ հիմնեց այնտեղ մի նոր անապատ, ի հարկէ, փոխելով իրանց ուխտին եւ միաբանութեանը յատուկ կանոնները: Ահա այդ անապատն էր, որ մենք տեսանք, եւ այդ անապատի պատմական ծագումն էր, որ ես խոստացայ անել:

Սիւնեաց մեծ անապատը թէեւ տուեց երկու նշանաւոր անձնաւորութիւններ, որպիսիք էին Մովսէս եւ Փիլիպոս կաթողիկոսները, բայց նրա նեղ, սահմանափակ, կղերական ուղղութիւնը կարող էր աւելի վնասակար լինել, եթէ ինքը բնութիւնը վերջ չդնէր այդ անապատի մոլեռանդութեանը: 1658 թոի սաստիկ երկրաշարժը ճեղքեց, պատառեց այն սարաւանդի մի մեծ մասը, որի վրայ կանգնած էր անապատը: Ահագին ապառաժը խորտակուելով, բաժան-բաժան լինելով, վերեւից թափուեցաւ իր հանդէպ գտնուած խոր ձորի մէջ, որտեղից հոսում էր Որոտն գետը: Գետի ընթացքը արգելուեցաւ, եւ ձորի մէջ մի ընդարձակ լճակ կազմուեցաւ, յետոյ ջուրը իր համար ուրիշ ճանապարհ բաց արեց: Բայց զարմանալին այն էր, որ քարաժայռի այն մասը, որի